

ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սահարա անապատը :

Սահարա անապատը հիւսիսային Մ. փրիկէի մէջ կ'իյնայ ու աշխարհքիս մեծագոյն անապատն է : Եզիպտոսէն ու Վուսիայէն ինչուան Մտլանդական ու կիանոսը ու Մտլաս լերանց ոտքէն ինչուան Վիկէր գետին ափունքը կ'երկրնայ , և բոլոր տարածութիւնը 220,000 քառակուսի փարսախ է . իսկ ծովուն երեսէն 1,000-1,500 ոտք բարձր է : Սահարայի մեծագոյն մասը աւազէ տափարակ դաշտ մըն է , ոչ ջուր ունի , ոչ կանաչութիւն , գետինը արևուն կիզանող ճառագայթներէն կրակի պէս կ'երի , և աչքդ ուր որ դարձնելու ըլլաս՝ ծայր ձոթ չկայ , ու միակերպ նոյն թշուառ տեղերուն մէջ առաջ կ'երթաս : Ալկիանոսի պէս մորկայից է Սահարան , և երբոր սաճէլ ըսուած հարաւային քամին մէյ մը բռնութեամբ փչելու որ ըլլայ՝ լերան պէս բարձր աւազ կ'առնէ վեր կը հանէ ու երբեմն ամբողջ կարաւաններ անոր տակը կը ծածկէ : Ենանկ տաք քամի է ասիկայ , որ շատ անգամ տիկերուն մէջ եղած ջուրը ցամքեցընելով՝ խեղճ ճամբորդներու դիակները գետինը կը փուէ . 1805 տարւոյն կարաւան մը կ'անցնէր Սահարայէն՝ 2,000 հոգով ու 1,800 ուղտով . ասիկայ կենալու սովորական տեղերուն մէջ ամենեւին ջուր չգտնելով՝ թէ՛ մարդիկները և թէ՛ կենդանիները ամենքն ալ ծարաւէ մեռան . անոր համար շատ վտանգաւոր բան է այս անապատիս մէջ ճամբորդութիւն ընելը , որուն կը վրկայեն ամէն օրուան հոն հանդիպած դիպուածական մահերը : Նանապարհորդին հեծած ուղտը , որ օրերով կերակրոյ ու ջրի պակասութեան դիմանալուն՝ գացողները տանող մի միայն տակուն կենդանին է , տեղ տեղ ոտքին տակ չորցած սակորներ կը ճզմէ , որ այս տեղերուն մէջ կեանքերնին ասուղներունն են . ուղտերու ու ձիերու ու

կերտիքը միայն՝ անծանօթ ճամբուն առաջնորդի տեղ կը ծառայեն , և թէ որ ճամբորդին ուղտը արագ արագ վազցընէ զինքը , անանկ որ յոգնածութիւն ու սաստիկ ծարաւէն բոլոր ուժը չկորած՝ այնպիսի հանգստեան տեղ մը հասնի , ուր իր նեղութիւններուն աւորեայ վախճան մը գտնէ , այն ատեն իրեն կեանքը կը խալըսի : Երևադարձին արևը Սահարայի մէջ անանկ սաստիկ է , որ հնոց մը կը դարձնէ զանապատը . տարւոյն մեծ մասը՝ հոնտեղի չոր ու տաք օդը կտրմրագոյն շոգիի պէս կ'երևայ , անանկ որ կարծես թէ հորիզոնին վրայ խել մը հրաբուխ կրակներ ու բոց կ'արձակեն : Յուլիսէն ինչուան հոկտեմբեր յորդ անձրև կու գայ . բայց այն ալ թեթեւ տարբերութիւն կ'ընէ ու անապատին բոլոր ընդարձակութեանը վրայ իր օգուտները չտարածեր : Տեղ տեղ քարուա բլրակներ կան կամ աւազէ լեռներ բարձրացած են . խիժաբեր ծառերու ու փշալից թփերու անտառներ կը գտնուին , և ասդիս անդին ալ այն անհատնում աւազին մէջ կտոր մը տեղ իբրև ծաղկի փունջ մը կանաչութեամբ ծածկուած կ'ըլլայ . մեծ բան է թէ որ յանկարծ աղբիւր մըն ալ մարդուս դիմաց ելլելու ըլլայ : Սակայն այս անբաւ ընդարձակութեան միակերպութիւնը կտորոզ և ճանապարհորդներուն համար զուարճութեան ու հանգստեան տեղ մը որ կայ նէ , ոչ ասիս ըսուած աւազահոյտներն են , որ վառվռուն ու առատ կանաչութեամբ կը խայտան և ջրով ալ լի են , ուր հոնտեղի ժողովուրդները բնակութիւն ալ հաստատած են :

Սահարայի լայնարձակ ամայութեան մէջ՝ աղաբարի խաւեր կը գտնուին հողուն մէջ , որ խիստ աղուոր ճերմակ են , և պազալթական քարի ժայռեր . տունկերու գալով՝ ինչպէս վերը ըսինք՝ խիժաբեր ծառեր կան . մորենի , եղիճ , առուոյտի՝ տեսակ խոտ մը , զորն որ ուղտերը ախորժելով կ'ուտեն , և ու

1 ՏՃ. Եօնճ :

րիչ խեղճ տունկեր . միայն քիչ տեղեր արմաւենոյ անտառներ կը տեսնես : Կենդանիներու մէջ՝ տեսակ մը մամուկ կայ , պզտիկ բզէզ մը , որ երբեմն աւազին վրայ խել մը մղոններու երկայնու թեամբ գետինը կը ծածկէ . կապիկներ , վիթ , վայրի եզի տեսակ մը , առիւծ , յովազ . ջայլամն շատ կայ հոս , որ մողէս , խխունջ ու քանի մը տեսակ խոտ ուտելով կ'ապրին . նոյնպէս ուզտերը , այծերը ու խոյերն ալ բազմաթիւ են , ու ուլասիաներուն մէջ կը բնակին . մէկ կողմանէ ազաւաններն և ուրիշ գիշակեր թռչուններ անապատին վրայ տարածուած դիակներուն վրայ կը յարձակին , մէկ կողմանէ ալ Սաւրիտանացոց գամիւռ շուները կ'ուտեն զանոնք . այս ամէն կենդանիները գրեթէ առանց ամենեին ջուր խմելու կ'ապրին այս անապատիս մէջ . իսկ ձի շատ քիչ կը գրտնուի , որոնք երբեմն ջրի տեղ կաթ կը խմեն :

Թէպէտ այսպիսի վախնալու անապատ է Սահարա , բայց 'ի վերայ այս ամենայնի խել մը կարաւաններ անոր մէջէն կ'անցնին այլ և այլ տեղեր երթալու համար , որոնց մէջ Սաղըրպէն Դոմպուբդու գացող կարաւանները աւելի գլխաւորներն են : Սակայն այդ կարաւանները ուղիղ գծով չեն կրնար երթալ , հապա ուլասիաներուն դրբին համեմատ կը խոտորին :

Ընապատիս մէջ բնակող ժողովուրդները երկու ազգ կը բաժնուին . Սաւրիտանացիք և Պէրպէրք . Սաւրիտանացոց աւելին շանաւոր ցեղերը Դրարզաս ու Պրաքնաս ըսուածներն են . Պէրպէրները երկու ցեղ են , որոնք Դուարիք ու Դիպպոսք կ'ըսուին : Ըստ երկու ազգերուն , և գլխաւոր ուլասիաներուն ու անոնց քաղաքներուն վրայ խօսելու զանց կ'ընենք հոստեղս , որովհետև մեր վախճանը հոստեղս Սահարայի ընդհանուր տեսարանը նրկարագրել է :

ՄԱՆՐԱՎԻՊ

Ողորմութիւն :

Օր մը Սողիէր իր Շաբէլ բարեկամին հետ գեղէն դառնալու ատեն ճամբան մուրացկան մը դիմացը ելաւ իրմէ ողորմութիւն ուզելու : Սողիէր ձեռքը ծոցը տարաւ , ստակ մը հանեց տուաւ , ու անցաւ գնաց : Երբ արդէ տար ճաւ առածը նայեցաւ , և մէկէն սկսաւ անոր ետեւէն վազել ըսելով . “ Պարոն , խաբուեր ես , տուածդ ոսկի է ” : Եւ խօսքիս Սողիէր ուրիշ ոսկի մ'ալ ծոցէն հանեց ու տուաւ մուրացկանին . վերջէն դարձաւ իր բարեկամին , “ Նայէ , ըսաւ , առաքինութիւնը ուր տեղուանք կը ծածկուի ” :

Ըրիտոտեղ փիլիսոփան մեղադրեցին անգամ մը թէ Վնչ այդ դատարկապորտ մարդուն ելար ողորմութիւն տուիր , որ իր ծուլութեանն ու միլութեանը պատճառաւ այդ խեղճութեան մէջ ընկած է : Պատասխանեց իմաստունը . “ Նայէ թէ ատ մարդուն , հապա մարդկային խեղճութեան օգնեցի ” :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՅ

Աղքատ է մարդս՝ չէ թէ բան մը չունենալուն համար , հապա վասն զի չաշխատիր : Թէպէտ և մէկը եկամուտ մըն ալ չունենայ , բայց միայն աշխատի , անոր պէս բարեկեցիկ է , որն որ առանց աշխատութեան հարիւր սկուտ եկամուտ ունենայ : Ով որ աղքատ է ու ձեռքը արհեստ մը ունենայ՝ ամենեին աղքատ չուրք քան զայն , որ թէպէտ տասը արտ երկիր ունի , բայց աշխատելով պիտի գտնայ իր կերակուրը : Այն դործաւորն որ հարազատ զաւակացը իր արուեստը ժառանգութիւն կը ձգէ , այնպիսի բարեք մը կը թողու՝ որ որչափ իրենք բազմաթիւ են , այնչափ անիկայ ալ կ'աճի : Բայց ամենեին նոյնպէս չէ՝ որ մէկը ապրուստի համար իր ունեցած տասն արտ իր զաւակացը մէջ բաժնէ :